## «ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՍԵՎ ԵՎ ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂԱՋԱՐԴՈՆԻ ԱՆԿԱԽ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-29/25-03/02

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК» (ԳԸԲ) 03/02 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур

ք. Մեծամոր «16» 01 2026թ.

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ - ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 05.05.2025 թվականին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

**«Ճարտարագետ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Մանուել Մարգարյանի, որը գործում է «Ճարտարագետ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սարքավորումների, սև և գունավոր մետաղաջարդոնի անկախ նյութական գնահատման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:**

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Ծառայությունը մատուցել բացառապես որակավորման վկայականը ներկայացրած փորձագետի՝ Նելսոն Խանլարի Գրիգորյանի միջոցով:

2.4.5 **Ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ Համաձայնագիրը կնքելուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կատարողի կողմից վերընշված փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն չի երաշխավորում 50 օրում անցագրերի տրամադրումը:**

2.4.6 **Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2000000 (երկու միլիոն)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահիովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **17** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,
**Հ/Հ** 1930000199200100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,
**ՀՎՀՀ** 04401874,
**Հեռ./ֆաքս**՝ 28-18-80, 28-06-69,
**Հեռ.**՝ 20-04-91, 36-32
**E-mail**: anpp@anpp.am

........................ **Ս. Մաթևոսյան**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Ճարտարագետ» ՍՊԸ**

0082, ք. Երևան, Իսակովի փ. 3/2,
**Հ/Հ** 220410513166000,
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ,
**ՀՎՀՀ** 02307001,
**Հեռ.**՝ 098-66-12-12,
**E-mail**: margar81@gmail.com

........................ **Մ. Մարգարյան**

*Պայմանագրի կառավարիչ՝ Աշոտ Գրիգորյան,*
***հեռ. 010282960, email: ashot.grogoryan@anpp.am***

Հավելված N 1
«16» 07 2025թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-29/25-03/02 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 79411230 | «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի շահագործումից հանված գույքը աճուրդային եղանակով օտարելու նպատակով անհրաժեշտ է մատուցել շահագործումից հանված սարքավորումների, սև և գունավոր մետաղաջարդոնի շուկայական գնահատման ծառայություն՝ համաձայն կից ներկայացված ցուցակի<br>*Գնահատումը իրականացնել «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության առ 24.08.2022թ. թիվ 1355-Ն որոշման համաձայն: | լրակազմ | 1 | 2000000 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ | Ծառայությունը մատուցել առավելագույնը 150 (հարյուր հիսուն) օրացուցային օրվա ընթացքում: Ծառայության մատուցման սկիզբ է համարվում ՀԱԷԿ ՓԲԸ պարածք մուտքի թույլտվություն ստանալու հաջորդ օրը: |

Լրացուցիչ պայման՝

Մասնակիցը պարտավոր է ներկայացնել փորձագետի որակավորման վկայական, տրված ՀՀ ոստիկանության, ՀՀ Արդարադատության նախարարության կամ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից, իսկ ծառայության ավարտին՝ համապատասխան փորձագիտական եզրակացություն:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «Ճարտարագետ» ՍՊԸ |
| Ս. Մաթևոսյան | Մ. Մարգարյան |

Պայմանագրի կառավարիչ՝ Աշոտ Գրիգորյան,
հեռ. 010282960, email: ashot.grogoryan@anpp.am

ՑՈՒՑԱԿ
«ՀԱԷԿ» ՓԲԸ աճուրդային եղանակով օտարման ենթակա ապրանքանյութական արժեքների

| h/h | Ապրանքանյութական արժեքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի քաշը | Ընդհանուր քաշը | Ներկայացնող ստորաբաժանում | Նշում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 | 9 |
| 1. | Машина постоянного тока ОДГ типа ГП-150-1500У4 | шт | 4 | ≈ 1570 кг | ≈ 6280 кг | ЭЦ | |
| 2. | Синхронный генератор/ двигатель типа СМ-10-39 УХЛ-4 120/75кВт | шт | 1 | ≈ 1350 кг | ≈ 1350 кг | | |
| 3. | Заградитель ЛЭП-110кВ | шт | 5 | ≈ 250 кг | ≈ 1250 кг | | |
| 4. | Заградитель ЛЭП -220кВ | шт | 1 | ≈ 300 кг | ≈ 300 кг | | |
| 5. | Сопротивление разрядника ТГ | шт | 6 | ≈ 200 кг | ≈ 1200 кг | | |
| 6. | Панель защиты и возбуждения ТГ | шт | 19 | - | - | | |
| 7. | Электрическая панель (разные) | шт | 12 | - | - | | |
| 8. | Щит автоматики ОДГ | шт | 2 | - | - | | |
| 9. | Трансформатор тока 6кВ | шт | 22 | 25 кг | 550 кг | | |
| 10. | Автоматический выключатель 0,4кВ типа АВМ | шт | 74 | - | - | | |
| 11. | Масляный выключатель МВ-6кВ | шт | 80 | - | - | | |
| 12. | Ячейки секции 6кВ 3РБ-2, 4РБ-2 | шт | 28 | - | - | | |
| 13. | Кабель типа ААШВ-3х240 (отрезками) | м | ≈ 1800 | ≈ 3,9 кг/м | ≈ 7000 кг | | |
| 14. | Кабель типа ААШВ разного сечения (отрезками) | - | - | - | ≈ 3000 кг | | |
| 15. | Трансформатор (Т1) типа ТДЦ-250000/110-70 У-1-1976г. | шт | 1 | Полная масса 203т | Полная масса 203т | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | Трансформатор (Т2) типа ТДЦ-250000/220-73 -1975г | шт | 1 | Полная масса 255т | Полная масса 255т | | |
| 17. | Трансформатор (Т3) типа ТДЦ-250000/220-73 -1979г | шт | 1 | Полная масса 253т | Полная масса 253т | | |
| 18. | Трансформатор (Т4) типа ТДЦ-250000/220-73 -1979г | шт | 1 | Полная масса 253т | Полная масса 253т | | |
| 19. | Трансформатор (21Т) типа ТРДНС-25000/35 -1975г | шт | 1 | Полная масса 54,7т | Полная масса 54,7т | | |
| 20. | Трансформатор (22Т) типа ТРДНС-25000/35 -1975г | шт | 1 | Полная масса 54,7т | Полная масса 54,7т | | |
| 21. | Алюминиевый токопровод (отрезками); 6кВ ,15,75кВ | кг | 12360 | | | | |
| 22 | Զտող հակագազի պարկուճ ДП-1 (дополнительный патрон) | հատ | 240 | | | СЧС и ГО | |
| 23 | Զտող հակագազի պարկուճ ДП-1 (дополнительный патрон) | հատ | 30 | | | | |
| 24 | Զտող հակագազի պարկուճ ДП-1 (дополнительный патрон) | հատ | 120 | | | | |
| 25 | Մեկուսացնող հակագազ (изолирующий противогаз) ИП-5 | հատ | 60 | | | | |
| 26 | Մեկուսացնող հակագազ (изолирующий противогаз) ИП-4 | հատ | 90 | | | | |
| 27 | Անհատական հակաքիմիական փաթեթ (индивидуальный противо-химический пакет) ИПП-8 | հատ | 60 | | | | |
| 28 | Բկարուսի հետևի կամրջակներ | հատ | 4 | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | Օդափոխիչ | հատ | 1 | | | ՄՏՏ | |
| 30 | Ժիգուլի մեքենայի թափք | հատ | 1 | | | | |
| 31 | Գազ 24 թափք | հատ | 1 | | | | |
| 32 | Լազ ավտոբուս | հատ | 8 | | | | |
| 33 | Իկարուս | հատ | 2 | | | | |
| 34 | Գազ-66 բուռավոյ (հորատող) | հատ | 1 | | | | |
| 35 | Հրշեջ մեքենաներ | հատ | 5 | | | | |
| 36 | Ռաֆի թափք | հատ | 2 | | | | |
| 37 | Երազի թափք | հատ | 2 | | | | |
| 38 | Տրակտորի կաբինա | հատ | 1 | | | | |
| 39 | Գազ 52 թափքային | հատ | 1 | | | | |
| 40 | Գազ 53 բենզավոզ (բենզատար) | հատ | 1 | | | | |
| 41 | Գազ 53 ինքնաթափ | հատ | 1 | | | | |
| 42 | Յումզ տրակտորի կաբինա | հատ | 1 | | | | |
| 43 | ԷՕ 3322 էքսկավատորի ստրելա | հատ | 1 | | | | |
| 44 | Կամազի կցորդ (прицеп) | հատ | 1 | | | | |
| 45 | Զիլ 130-ի թափք | հատ | 1 | | | | |
| 46 | Գազ 53-իի կաբինա ռամա (հենասարք) | հատ | 1 | | | | |
| 47 | Մազ մեքենայի հենասարք | հատ | 1 | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 48 | Մազ ավտքկռան | հատ | 1 | | | | |
| 49 | Էքսկավատոր ΕΟ 3323 | հատ | 1 | | | | |
| 50 | Կամազի ֆուրգոն | հատ | 1 | | | | |
| 51 | Ավտոկռան КС 3577 | հատ | 1 | | | | |
| 52 | Մետաղաջարդոն սև | տոննա | 15,135 | | | ՇՎԱ | |
| 53 | Ալյումինի թիթեղների ջարդոնների կտորներ | կգ | | | | | Փաստացի քանակը կշռումից հետո |
| 54 | Պանել ՆԱ 5 | հատ | 1 | | | ՋԱՉԱ | |
| 55 | Պանել ՆՏ 6-9 | հատ | 4 | | | | |
| 56 | Հրակայուն աղյուս | հատ | 17000 | | | ՋԱՀԱ | |
| 57 | Թուջե մարտկոցներ | հատ | 7,5 | | | | |
| 58 | Մետաղաջարդոն սև | տոննա | 40 | | | | |
| 59 | Մետաղաջարդոն սև | կգ | 4250 | | | ԱՃՃԹԱ | |
| 60 | Չժանգոտվող մետաղ | կգ | 320 | | | | |
| 61 | Օգտագործված մետաղական պահարաններ | հատ | 122 | | | | |
| 62 | Մետաղաջարդոն սև | տոննա | 8,265 | | | ԿՎԱ | |
| 63 | Ապամոնտաժված 5 վերելակ | կգ | | | | | Փաստացի քանակը կշռումից հետո |
| **Ապամոնտաժված կամրջային կռունկ 30տ** | | | | | | | |
| 64 | Электродвигатель механизма передвижения тележки | шт. | 1 | | | | |
| 65 | Тормоз механизма передвижения тележки | шт. | 1 | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 66 | Электродвигатель механизма главного подъема | шт. | 1 | | | РЦ | |
| 67 | Тормоз механизма главного подъема | шт. | 1 | | | | |
| 68 | Редуктор РМ 350 | шт. | 1 | | | | |
| 69 | Редуктор РМ 1000 | шт. | 1 | | | | |
| 70 | Электродвигатель механизма вспомогательного подъема | шт. | 1 | | | | |
| 71 | Тормоз механизма вспомогательного подъема | шт. | 1 | | | | |
| 72 | Редуктор РМ 650 | шт. | 1 | | | | |
| 73 | Электродвигатель механизма передвижения крана | шт. | 2 | | | | |
| 74 | Тормоз механизма передвижения крана | шт. | 2 | | | | |
| 75 | Редуктор механизма передвижения крана | шт. | 2 | | | | |
| 76 | Редуктор механизма передвижения тележки | шт. | 1 | | | | |
| 77 | Колесо ходовое | шт. | 2 | | | | |
| 78 | Колесо ходовое приводное | шт. | 2 | | | | |
| 79 | Подкрановые рельсы КР70 (общая длина 248м) | шт. | 21 | | | | |
| 80 | Кабина открытая 10-292А (кабина, лестница) | шт. | 1 | | | | |
| 81 | Шкаф | шт. | 8 | | | | |
| 82 | Концевой выключатель | шт. | 2 | | | | |
| 83 | Корпус коренного подшипника | шт. | 2 | | | | |
| **Ազատոտաժված կամրջային կռունկ 250տ** | | | | | | | |
| 84 | Шкаф СУГД | шт. | 1 | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 85 | Шкаф ВШ | шт. | 1 | | | РЦ | |
| 86 | Тормозной резистор | шт. | 4 | | | | |
| 87 | Блок тормозного резистора | шт. | 5 | | | | |
| 88 | Вводный шкаф | шт. | 1 | | | | |
| 89 | Щит ГП | шт. | 1 | | | | |
| 90 | Щит ПТ | шт. | 2 | | | | |
| 91 | Щит ПМ | шт. | 1 | | | | |
| 92 | Редуктор механизма передвижения тележки | шт. | 1 | | | | |
| 93 | Редуктор ГК-1000 | шт. | 1 | | | | |
| 94 | Редуктор Ц2-400 | шт. | 1 | | | | |
| 95 | Цилиндрическо-червячный редуктор | шт. | 1 | | | | |
| 96 | Редуктор механизма передвижения крана | шт. | 8 | | | | |
| 97 | Тормоз механизма передвижения тележки | шт. | 1 | | | | |
| 98 | Тормоз механизма передвижения крана | шт. | 4 | | | | |
| 99 | Верхний блок | шт. | 1 | | | | |
| 100 | Электродвигатель механизма вращения крюка | шт. | 1 | | | | |
| 101 | Электродвигатель механизма вращения оси | шт. | 1 | | | | |
| 102 | Генератор | шт. | 2 | | | | |
| 103 | Электродвигатель генератора | шт. | 3 | | | | |
| 104 | Таль электрический | шт. | 1 | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 105 | Командоаппарат | шт. | 2 | | | РЦ | |
| 106 | Кабина | шт. | 1 | | | | |
| 107 | Электродвигатель механизма передвижения тележки | шт. | 1 | | | | |
| 108 | Вал промежуточный короткий | шт. | 1 | | | | |
| 109 | Вал промежуточный длинный | шт. | 1 | | | | |
| 110 | Электродвигатель механизма главного подъема | шт. | 1 | | | | |
| 111 | Тормоз механизма главного подъема | шт. | 2 | | | | |
| 112 | Электродвигатель механизма вспомогательного подъема | шт. | 1 | | | | |
| 113 | Тормоз механизма вспомогательного подъема | шт. | 1 | | | | |
| 114 | Электродвигатель механизма передвижения крана | шт. | 4 | | | | |
| 115 | Шкив | шт. | 1 | | | | |
| 116 | Подставка для шкива | шт. | 1 | | | | |
| 117 | Шкаф ШПА | шт. | 1 | | | | |
| 118 | Электродвигатель | шт. | 1 | | | | |
| 119 | Блок сопротивлений | шт. | 1 | | | | |
| 120 | Статор турбогенератора | шт. | 2 | | | | Сведения о содержании драгоценных материалов и цветных материалов на один турбогенератор (ротор и статор) типа ТВВ-220-2А:<br>• Серебро -11кг; |
| 121 | Ротор турбогенератора | шт. | 2 | | | | |
| 122 | Эл. двигатель 1НТВ | шт. | 1 | | | | |
| 123 | Статор эл. двигателя 1НТВ | шт. | 2 | | | | |
| 124 | Эл. двигатель КЭН | шт. | 5 | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 125 | Эл. двигатель | шт. | 18 | | | ТЦ | • Медь и медные сплавы – 10130кг;<br>• Алюминий и алюминиевые сплавы – 2906кг;<br>• Баббит – 24кг.<br>Основание паспорт ОБС.480.509.ПС. |
| 126 | ОЭ (Основной эжектор) | шт. | 6 | | | | |
| 127 | ЭУ (Эжектор уплотнения) | шт. | 2 | | | | |
| 128 | ДМБ (Демпферный маслобак) | шт. | 2 | | | | |
| 129 | ВБ (Вакуумный бак) | шт. | 2 | | | | |
| 130 | ЗГ-500 | шт. | 2 | | | | |
| 131 | ГСР | шт. | 2 | | | | |
| 132 | ВТГ | шт. | 2 | | | | |
| 133 | Теплообменник эксгаустера | шт. | 2 | | | | |
| 134 | Возбудитель ГСР и подвозбудитель | шт. | 2+2 | | | | |
| 135 | Труба ф2020 | тонна | (длина и весь фактически) | | | | |
| 136 | Металлолом черный | тонна | 184 | | | | |

Չափաբաժիններում ներկայացված քանակական չափանիշները պայմանական են, վաճառքը կիրականացվի փաստացի չափաքանակների հիման վրա (կգ/հատ).

Հավելված N 2
«16» 07 2025թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-29/25-03/02 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79411230 | Սարքավորումների, սև և գունավոր մետաղաջարդոնի անկախ նյութական գնահատում | | | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 |

Վճարումը կկատարվի անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, փաստացի մատուցված ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «Ճարտարագետ» ՍՊԸ |
| Ս. Մաթևոսյան | Մ. Մարգարյան |

*Հավելված 3*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ________________________ |
| հվհհ ____________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «               » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակ ացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »        20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «--»        20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի    միջև  «--»   20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________          ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»        20  թ.